

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

ՄԻՈՒԹԻԻՆ

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան ֆրանք 4
Վեցամսեան 2
Կանխիկ վճարելի

ԱՄՍԱԹԵՐԹ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԴՆԱՐԻ

ԱԹԵՆՔ

1899

ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 35

ԱՌԱՋԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի Օրմանեանէ՝ փութով հեռանալ պատ-
րիարքական գահէն, եթէ կուզէ իր թանկագին կեանքի
դոյութիւնը պահպանել:

ՄԱՀ ԴԱԻԱՅԱՆԱՑ Կազմակեր-
պութեան Գրասենեկէն

Կը խնդրուի խմբագրութենէդ մի օրինակ «Միութիւն»
շրջել իր հասցէին:

ՈՐԻՆՆ Է ՅԱՆՑԱՆՔԸ

Նորէն վեղարը... նորէն այդ սեւ
պատանքն է, որ կը փութի Հայ տա-
րեգրութեան էջերէն մէկուն վրայ:
Վերջին տասնեակ տարիներու մէջ
Ազգին համար ճակատագրային բան
մը եղաւ գրեթէ յաճախակի արիւ-
նոտ գծերով արձանագրել մեր Կղե-
րին ստորնութիւնները, որոց մէջ Օր-
մանեան կուգայ այսօր փառաւոր
տեղմըղըրաւել իր ծանօթ հեռագրովը:

Սա վերջին տարիներու մէջ չեղաւ
միտք մը այնքան մաշող, այնքան
տառապող, որքան Օրմանեանինը՝ գտ-
նելու համար մէկ հնարը ժողովրդ-
դեան աչքէն ծածկելու համար հար-
ուածներու ուղղութիւնը, զոր կու-
տար ինք սխալմամբ իրման, ասդին
իր ազդին առջեւ կոկորդիլոսի ար-
ցունքներ ցանկով, իսկ անդին իւր
փատիչահին հաւատարմութեան գործ-
նական ապացոյցներ տալով:

Ու ինչ աւելի մեծ հաւատարմու-
թիւն կարմիր Սուլթանին համար,
քան Հայու ինքնութիւնը պահպանելու կոչուած ազգային
ամենէն նուիրական աւանդներն իսկ մէկիկ մէկիկ Զախ-
ջախել ու Անոր ոտքերուն տակ դնելով գոչել «Վեհափա՛ւ
Տէր, ահա քեզի ընծայ մըն ալ, արիւնոտ կտոր մըն ալ
Հայու սրտէն փրցուած»:

Ու հա՛րկ է վերյուշել հոս իր այդ գոհերը:

Եւ սակայն մարտիրոս Ազգի մը կեանքը աւելի դառ-
նացնելու և անոր աննման նահատակութեան արդիւնքը
անժամանակ երկարածգելու համար բաւական չէին մէկ,
երկու, երէք հարուածներ, հապա պէտք էր Անոր գլխին
ժուրճի անընդհատ հարուածներու շարք մը, այնքան վար-
պետ, որքան անգութ ու ճիւղալային:

Այո՛, պէտք էր զարնել մեր նահատակներու յիշատա-

կին, ոսկորներուն ու ցիր ցան շիրիմներուն, պէտք էր
մոռնալ, ինչ կրսեմ, պէտք էր ուրանալ մեր անհուն տա-
ռապանքները, պէտք էր թքնել մեր արեան ճակնճներուն
վրայ, պէտք էր պոռնկային խնդուքով մը պղծութեան վը-
կան ըլլալով մեր կոյսերու վայրագ լիկուսին ու այս ամեն
սրբապղծութեան հերքման իբր գործնական երաշխիք
Սուլթանին ձեռքը տալ պաշտօնական զէնք մը, ինչ որ էր
անսխալ Օրմանեանին ստորագրած հեռագիրը Լա Հէյի
ժողովին համար:

Մինա Չերազ՝ Ազգին այդ վաղեմի վաստակաւորը
կերթար աղաղակելու թէ՛ մենք Հայերս դարեւի՛ ի վեր

Քրիստոսին խունկ ծխած ըլլալուն
համար, այդ՝ մեռելի մը պէս քնա-
ցող Աստուածորդիին միջիարկերով
մոմի դրամ ծախսած ըլլալուն հա-
մար, վերջապէս քրիստոնեայ ըլլա-
լուն համար հարիւր հազարներով
գոհ տուինք, մինչդեռ Օրմանեան այդ
հեռագրով կը հեգնէր մեր ճիւղակու-
րիճներու յիշատակը և խօլ թափով
մը իր ոտքին տակ կառնէր հանրա-
յին զգացումը ի սէր իւր պաշտօնեալ
փատիչահին:

Չէ՛, չէ՛, այլ եւս վարագոյրը
պատուած է ու Օրմանեանի անձին
վրայ երեւան եկած աճապարարի մը
քոլոր յատկութիւնները, որոնք յա-
նուն քաղաքագիտութիւն
կոչուած խրտուիլակին կաքաչի մը
գերը տուին իրեն ու ինք խաղաց ու
խաղաց մեր Հայրենի աւերակաց վրայ
ի հաճոյս վատչուեր հարեմականին.
չէ՛, լրբութիւնն ալ չափ մը ունենա-
լու էր. գիտնալու էր թէ լարը բա-
րակ է և չը կրնար տանիլ իր վիթ-
խարի մարմնոյն ծանրութիւնը:

Սակայն որինն էր յանցանքը՝ Այո՛, կ'ընդունիմ թէ
մայրեր կան, որ հրէշներ կը ծնին ու օրին մէկը — սեօր —
ատոնք ճիշդ Օրմանեանի պէս ժողովուրդներ կառավարե-
լու կը կոչուին, կը հասնին բարձրութեան մը, իրենց պատ-
ուանդան ընելով յօշոտուած դիակներու կոյտեր. բայց
ինչ ըսել անոնց, որ ձիգ տարիներ կը թողուն զիրենք
այդ կուռանին վրայ, որպէսզի շարունակեն իրենց աւե-
րիչ գործը:

Մեր յեղափոխական թերթեր անխտիր պախարակեցին
Օրմանեանն այն օրէն ի վեր յ'որում սկսեց սեւ դրօշակը
պարզել: Ազգն ամբողջ սարսուռ, երբ հետզհետէ թաղել
սկսեց մեր նուիրական աւանդները: Այսպէս արարատ
կսկծանօք թքաւ իւր երեսին երբ հռչակաւոր հեռագիրը



ԺԻՐԱՅՐ

(Տեսնել Տրդ էջը)

ստորագրեց. բայց այս ամեն պղատոնական պատիժներ իրեն համար երբէք նշանակութիւն չունեցան ու գեռ պլլուած պատրիարքական գաւազանին, չարունակեց իր սարկական գործն առ ամենաբարեբար Սուլթանն:

Որինն է յան անբը: Օրմանեանինը: Երբէք. նա ճիւղ է ծներ, ճիւղ ալ պիտի մեռնի: Յեղափոխականներուն է յանցանքը. ձեռնասուններուն է, որ պղտիկ վճիռ մը ներկայացնելով, վերջ չին տար այս աղէկսուր ողբերգութեան:

«Սրբազան, գիտե՞ք չէք խանիւր, գէթ Վախչէք... ու թողուցէք ասպարէզը»:

Այս աղբը պիտի ըլլար մարտիրոս Աղբի մը աղաղակը. կեանքի նշան մը, ուր պիտի տեսնուէր ջախջախուած, բայց տակաւին ապրող ժողովուրդի մը տաք շունչը:

Այլապէս քաջալիրած պիտի ըլլայինք դաւաճանութիւնը և յանցանքը յանցանք ըլլալէ դադրելով, ոճրաչործութեան հաւատարման մը պիտի ըլլար և միեւնոյն ատեն մեծազոյն աղտը Հայ Յեղափոխութեան:

Զահր

ՎԵՐՋԱՑՈՒՑԷՔ

Անցեալները «Միութիւն»-ի մէջ «Գրական Սրիկա» վերնագրով մի յօդուած կրեցաւ, որ կը վերաբերէր Ա. Զօպանեանի հասցէին. այդ յօդուած որչափ Հաճոյ չը թուեցաւ շատերու, նոյնչափ կամ առաւել անհաճոյ և անխորհուրդ էր նոյն յօդուածի գոյութեան ծնունդ տուող հրատարակութիւնն Ա. Զօպանեանի կողմանէ, որն որ իւր ուրիշ նմաններու հետ հրապարակ եկաւ արդէն եղած կուսակցական անջրպետն առաւել հուս ընդարձակելու. ո՛չ միայն այսչափ, այլ և գրգռելու հասարակաց միտքն ու անոր ճարակ մատուցանելու ի վնաս այն ընդհանրական գաղափարին որուն առաւել քան երբէք այսօր պէտք ունի Հայ ազգը, և զոր ըստեղծելու փոխարէն իսպառ ոչնչացնել կը նկրտին անձնապատան և տաք գլուխ երիտասարդներ՝ երես առնելով իրենց անսրամաբան գրչի ժամանակաւոր փայլումէն, ինչ որ նպատակ չի պիտի լինէր ոչ մի հեռատես մտքի. բայց չաւալի իրողութիւնը սորա հակառակն է այսօր. որով ինչպէս շատեր, ես եւս կը պարտաւորիմ այս կարգի յախուռն և անօգուտ հրատարակութեանց հիշխաններուն վերջացուցէք գրչել:

Հրապարակային կամ ընդհանրական ամեն ձախող ձեռնարկութեանց հիշխանին միշտ դատապարտելի է, մինչեւ իսկ պատժապարտ՝ եթէ չանտար այլոց լուրջ խորհրդոց: Զօպանեան յորդոր, խրատ ու խթան ստացաւ կարգաւ Բազմալէպէն, Մշակէն, Միութիւնէն և Շարժումէն. բայց ճշդիւ չգիտցուի ցարդ նորա կրած ուղղիչ դասերու աղբեցութեան աստիճանը, սակայն երբէք չեմ հաւատար թէ Զօպանեան ընդ միշտ աղբ. մարմինէն կտրուելով նետուելու արժանի մի մասն համարուի. Զօպանեան Արփիար մը չէ. թէեւ այսօր նորա կուսակց կամ համախոհ, վաղիւ այդպէս չի պիտի լինի. Զօպանեան այսօր Զերազի մը դափնիին կրնայ նախանձիլ և մի օր ալ ստանալ զայն, բայց Արփիար Նաղարբէկի մը ետեւէն միայն կը հասնի առանց նորա տեղը բռնել կարենալու առանց ընդերկար կարենալու իրեն գործիք ընել կուսակցութեան մի մասն ու այս կամ այն հրապարակագիրը: Արփիարին տարան առնուած է, այդ փոստ մասնիկ կը կարելի է բուն մարմինէն կտրել, նետել առանց խղճի խայթ մը զգալու, որպէս իրաւամբ Միութիւնի յարգելի խմբագրաւ նոր վարչութիւնն որոշած է յետ այսօրիկ նորա մասին ոչ մի բարենկատ բան գրել իր թերթին մէջ. սակայն Զօպանեանը ճանչնալու է իւր անձնական և զրական

տարիքին մէջ, ես քաջ գիտեմ նորա անտրամաբոն լինելը ու չըջանկատուութեան պակասութիւնը, որք ներելի են անփորձ մի հրապարակագրի: Հարցու էք Զերազի թէ՛ ինչ սրտամաշ ու հոգեւանջ օրեր ունեցաւ երբ իւր աշխարհաբարի ստեղծագործումն ի հանդէս կը բերէր, հիւր իւր խղատ գաղափարներն յայտնելու հ մար «գալուցական ոտակականութիւն» մը կը տեսնէր իւր վարժապետն ու բարեկամ քննադատը, մինչեւ իսկ տպագրիչը, ու զրչափ կը դատաւեալուէր մի կարգ նախանձորդներէ վեհաժողովէն վերադարձին իւր ըրած հրատարակութեանց համար. սակայն այսօր Զերազ Հայ ազգին միայն անարատ և անձուէր զաւակը կը հռչակուի ո՛չ միայն ամեն Հայ դատակարգէ՛ այլ և սե և ճերմակ կուսակցականներէ, մինչեւ իսկ հրապարակի վրայ ձայն ունեցող ուխտեալ դաւաճաններ չեն համարձակիր նորա վերայ արատի մի նշոյլ ձգելու փորձուի: Ուրեմն ինձ հետ թող շատեր վստահ լինին թէ Զօպանեանի ալ փորձութեան օրերը կան, ինչ և նա բովէն զորս կ'ենէն դուռած և փորձուած ու այն ատեն մենք կարող կը լինինք մի նոր Զերազ տեսնել յանձին Զօպանեանի, բայց առանց զանց առնելու խնդրել Զօպանեանէն որ չի վերսկսի, Անահիտի բաղարանին միայն ծառայէ ըստ իւր որոշ ճրագրի:

Շահէն

ՄԱՅ ԴԱԽԱՋԱԼՆԵՐՈՒ

Այս անուան տա՛յ կազմուելիք կազմակերպութեան սրտով համակիր, գաղափարակիր և կուսակից եմ, այս կարգի կազմակերպութեան մը պէտքը շատոնց զգուլի եղած էր, քանի որ յայտնի յեղափոխական կուսակցութիւնները յայտնի պատճառներով արտասահմաններու մէջ թէր օրի գործը իրենց ծրագրէն դուրս ձգած են:

Սակայն խնդրին կարեւորութիւնը, ծանրութիւնը և մեծ պատասխանատուութիւնը կ'ստիպէ մեզ լրջօրէն քննել խնդիրը և կազմակերպութեան տալ իր բարձր գիթքը:

Որոշումներու մէջ արդար, անաչառ, խղճամիտ, անսրբալ և անդատապարտելի լինելու համար հետեւեալ պարագաները ուշադրութեան առնել հարկ է:

1—Մ ա հ Դ ա ա ճ ա ն ն եր ու կազմակերպութեան անդամակցելու են երկու կարգի մարդիկ, մէկ՝ անձնագրով-գործադիրներ և միւսը՝ խորհրդատու-վարչականներ:

2—Ա ն ձ ն ա զ ո հ-գ ո ծ ա դ ի ը անդամներու պարտականութիւնը լինելու է գործադրել խորհրդատու-վարչականներու կողմէ սրուած թէրօրի որոշումները, առանց գիտողութեան:

3—Խորհրդատու-վարչականները կազմելու են մէկ քանի անդամներէ բաղկացած ատեան մը, որ տեղ պիտի քննեն և որոշեն կամ մերժեն ի հարկին, թէրօրի գործը:

4—Ա մ է ն քաղաք ունենալու է իր անձնագրով-գործադիր անդամները և խորհրդատու-վարչականները:

5—Այս կազմակերպութեան անդամակցողներու իսկական անունները գաղտնի մնալու են և ամէն մէկը ունենալու է իր ծածկանունը:

6—Անդամներու վրայ խիստ մեծ հսկողութիւն ի գործ դնելու է և չը փորձուած ու կասկածելի բնաւորութեամբ անձներու անդամակցութիւնը ընդունելու չէ:

7—Այս կազմակերպութեան մէջ կեդրոնացման գրութիւնը նշուելու է, ամէն մէկ քաղաքի վարչութիւնը անկախ ըլլալու չէ իր տուած որոշումները գործադրութեան դնելու, այլ հպատակելու է կեդրոնական վարչութեան մը վերջնական ու վճռական որոշման:

8—Կեդրոնական վարչութիւնը բաղկանալու է 7-8 փորձառու, խղճահար, զարգացած և ոչ-թուղ կուսակցական անձներէ և գործելու է ազատ երկրի մը մէջ:

9—Խաբարանչիւր քաղաքի խորհրդատու-վարչականները առնուադն 5 անգամէ քաղկացած ատեան մը կազմելու են և այն տեղ քննելու են իրենց ներկայացուած խնդիրները և մանրամասն տեղեկագրով մը ներկայացնելու են իրենց որոշումը կեդրոնական վարչութեան վաւերացմանն ու քննութեան:

10—Կեդրոնական վարչութիւնը իրաւունք պիտի ունենայ զանազան հարցումներ ընելու և նորանոր բացառութիւններ պահանջելու խորհրդատու-վարչականներու ատեանէն, խնդիրը աւելի լուսաբանելու համար և հաստատել կամ մերժելու լիազօր իրաւունքը պիտի վայելէ:

11—Ստորհրդատու-վարչականներու ատեանը բացարձակապէս պարտաւոր է հպատակիլ կեդրոնական վարչութեան վճիռներուն, հակառակ պարագային՝ ծանր և պատժելի պատասխանատուութիւն մը կը հրաւիրէ իր վրայ:

12—Թէ՛ խորհրդատու-վարչականները, թէ՛ անձնագոհ-գործադիր մարմինները և թէ՛ կեդրոնական վարչութիւնը ի հարկին ազատ է կողմնակի անձերու դիմելու և տեղեկութիւններ քաղելու, ի հարկէ առանց ինքզինքը մատնելու:

13—Արտասահմանի ազատ երկիրներու մէջ գտնուող վարչութիւնները ունենալու են իրենց կնիքը և մասնաւոր հասցէները (Poste Restante), բանակցութիւններու և որոշումներ հաղորդելու և որ և է գրութիւններու մէջ միայն կնիք պէտք է զննել առանց ստորագրութեան:

14—Ամէն անհատ և կուսակցութիւններ ազատ են իրենց գիտցածը հաղորդելու և այս կամ այն դաւաճանի համար թէրօր պահանջելու, իրենց հիմնաւոր և անհրաքելի փաստերն ու ապացոյցները տալով:

15—Անձնագոհ-գործադիրներ եթէ քաղաքի մը կամ թէրօր գործուելիք վայրի մը մէջ չի գտնուին, ուրիշ քաղաքի մը խորհրդատու-վարչութիւնէն հարկ է պահանջել տնտեսմէ մէկը, որպէսզի երթայ որոշուած տեղը և թէրօրը գործադրէ:

16—Թէրօրի որոշմագիրը պէտք է կնքուած լինի թէ՛ որոշող խորհրդատու-վարչականների ատեանին կնիքով և թէ՛ կեդրոնական վարչութեան վաւերացող կնիքով:

17—Անձնագոհ-գործադիրները վերոյիշեալ 16-րդ յօդուածի մէջ յիշուած երկու կնիքներով չի կնքուած որոշումները պէտք է՝ գործադրեն, հակառակ պարագային պատասխանատուութեան տակ կը մնան:

18—Թէրօրիստներու ճանապարհածախսը և կազմակերպութեան անհրաժեշտ ծախսերը հոգալու համար հանգանակութիւններ անել, հասոյթի զանազան միջոցներ հայթայթել և կուսակցութիւններէ եկած առաջարկները վճարուելէ յետոյ գործադրելու համար հարկաւոր ծախսերը պահանջել:

19—Դաւաճանիւրու պատասխանատուութիւնները և թէրօրի արժանի լինելը որոշել թէ՛ մասնակի և թէ՛ կեդրոնական ատեաններու կողմէ:

20—Թէրօրի աստիճանները, այսինքն սպառնալիք, նիւթական կամ ֆիզիքական թեթեւ պատիժ և կամ մահ, որոշելը կը պատկանի գարձեալ մասնակի և կեդրոնական ատեաններու:

Կը խնդրուի, որ այս մասին ազատագէտ ամէն ոք իր կարծիքը յայտնէ Մ Ի Ռ Ի Թ Ի Ն միջոցաւ:

ՃՇՄԱՐՏԱԽՕՍ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Միութեան խնդրոյ անյաջողութիւնը ցաւօք որսի տեսնելով պատշաճ կը համարիմ երկու խօսք ընել:

Խմբագրութիւնդ՝ միայն Արփիարին կը վերագրէ Միութեան խնդրոյ անյաջողութիւնը, բայց միթէ՞ կարելի է

այս խնդրոյ մէջ բոլորովին անմեղ հռչակել Դաշակ-ցականները, որոնք Արփիարի մի խնդիր յարուցանելով, արգելք հանդիսացան Միութեան խնդրի իրականացումին և աւելի մնասակարր հայ ժողովուրդը լքումի և յուսահատութեան մղեցին: Երբ հրապարակաւ կը յայտարարեն թէ՛ տօգումէնտներ ունին ի ձեռին, պէտք է՞ որ ընկերային դատաստան մը կազմուէր ու ամբաստանեալը դատուէր, որպէսզի մենք նորակազմ հնչակեան կուսակցութեան պատկանող յեղախոխականներու զգուշանայնք հրապարակաւ դատապարտուած մնասակար տնձնաւորութեան մը, բայց ցաւալի է մեզ խոստովանիլ որ խնդիրը դեռ մութին մէջ կը մնայ:

Ո՛չ սիրտ և ո՛չ ալ ցանկութիւն ունէի այս խնդրոյն վրայ խօսելու, քանի որ խօսուած ու գրուած է այս մասին, բայց որովհետեւ խնդիրը ազգ. շահերու և յեղափոխութեան հետ կապ ունի. պէտք է կրկին շեշտել, որպէսզի մութ խնդիրները լուսաբանուին, անկեղծները ճանաչուին և դաւաճաններ խաղաղ վտարուին յեղափոխական ապարէզէն: Արդարեւ պետերազմի դաշտին վրայ կըռւող և հայրենեայ փրկութեան համար զոհուող անձնուէր հերոսին չափ ծառայութիւն մատուցած կըլլան ամեն անոնք, որք հանրութեան կը ծանօթացնեն վատերը և դաւաճանները. սակայն միշտ ունենալու են զօրաւոր ապացոյցներ ու գրական փաստեր: Նպատակաւ Արփիար մը պաշտպանել չէ, այլ ճշմարտութիւնը ի յայտ ածել, և յիշ տփոխական սուրբ գործը ըստ առաջնայն չարունակել անբիծ մարդերով: Մենք կը հուստանք թէ՛ երկու կուսակցութեանց մէջ ալ կը գտնուին վատեր և անկեղծ ու անշահ խնդիր բաղմամբ. յեղափոխականներ, որոնք գոնիւ և հրապարակը մաքրելու համար աշխատել ամենուս ալ պարտաւորութիւնն է, բայց մ'ենոյն ժամանակ մեր ալ արդար իրաւունքն է միշտ պահանջել այն տօգումէնտները, զորս ձեռք բերած է Կ. պօլսոյ կեդր. կօմիտէն ահագին զոհողութիւններով:

Երկու խօսք ալ պ. Թափառիկին՝ որ Պապը-Ալիի ցոյցին վրայ մարդարէտաւորով ուզածին պէս կը ներկայացնէ ըսելով, «անպատճառ ուրիշ սահմանափակ ժողով մ'ալ ունեցած են». պ. Թափառիկ, եթէ չես ուղիւ չարամտութեամբ մտքերը չլիթել, այդպիսի ենթադրութիւններով խնդիր մը չի հաստատուիր, դրական փաստ պէտք է:

Պապը-Ալիի ցոյցին մէջ եթէ երբէք պաշտօնական մարմին մը կամ ո՛ր և է անհատներ զէնք մտցուցած են ու մնասակար եղած է, միթէ՞ իրաւունք է անոնց դաւաճան կոչել: Եթէ ընթացիկներով ցոյց ընել տուողները կը բռնադատուին, նոյնը առաջներով կը նիւ տուողները արդարացին՝ պէտք է: Ինչո՞ւ արդեօք Դիւլակեանները բիշ մ'ալ իրենց սխալ գործերը չեն քննիր: Այսօր վանայ նահանգը սիրող սովը՝ Խանասորի կռուին անխուսափելի հետեւանքն է: Ինչ որ ալ ըլլայ, անցեալին վրայ ողորակ յիմարտութիւն է, դառնանք մեր խնդրոյն: Պ. Թափառիկ՝ ընդունելով ընկերային դատաստանի առաջարկը՝ կըսէ, «որպէսզի երթեալութեանց և բանակցութեանց ծախսերը հոգացուին, Արփիարի պաշտպանները պարտաւոր են այդ առթիւ հանգանակութիւն մը բանալ»: Այս առաջարկին որքան անիրաւ ըլլալը կը թողունք «Միութիւն»ի լրջախոհ ընթերցողաց դատողութեան: (1)

Մանչեսթըր (Ամերիկա)

ԱՐՇԱԽԻՐ

(1) Պ. Արաւի՛ր. Զեր անկեղծութեան վրայ անկասկած ըլլալով, յանուն անկողնակալութեան նամակնիդ համառօտեւորով հրատարակեցինք: Դաշակցականները դատապարտելի են իրենց յայտարարած տօգումէնտները չի հրապարակելուն համար, կընդունինք. բայց պ. Արփիարն

ալ երբէք չի կարող արդարանալ իր բազմադիմի ճիգ-վիթուլեամբ, ինչու որ դարուս վերջերը խիստ շատեր կան իր ճարպիկ խորամանկութիւնները գերազանցող, հետեւապէս իր դեղահատիկները միայն բարեմիտներու և կամ իրմէ նիւթական շահ սպասողներու կարող է կլլեցնել: Եւրոսե-Յեղափոխա անտի խմբագիր պ. Ճշմարտախօսեան իր հրատարակութիւնները վաւերացնող բազմաթիւ վկաներ ունի, որ պիտի ներկայացնէ ընկերային դաւաճանքին եթէ երբէք տեղի ունենայ: Ուրեմն զինքը անպայման կերպով պաշտպանողները թող փութան հանգանակութեան մը ձեռնարկել և ժամ առաջ պահանջել ընկերային դաւաճանքը, եթէ կողմն իրենց պաշտած կուռքին բազմադիմի գոյները տեսնել: Փոխանակ տօգումէնտներ փնտռելու ու շարժութեամբ կարգադրու է «Դրօշակ»ի երկու համար յաւելուածներն և պ. Ճանկիւլեանի «Դիմակաւորներ»ը, եթէ այդ հրատարակութիւններն ալ անբաւական նկատուին, պէտք է պ. Տամատեանի և պ. Ճանկիւլեանի դիմել անոր նկարագիրը գիտնալու համար: Բաւական է որքան խարեցինք հայ ժողովուրդը, և անոր պաշտել տուինք զեղծանողներն և կեղծարարներն իբր մաքուր գործիչներ: Քիչ մըն ալ աչքերնիս բանանք և չըջահայեաց լինինք եթէ ճշմարիտ հայրինասէրներ ենք: Մ. Խմբագրութեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Է Օ Ս Տ Է Ն Ճ Է

Վարժարանաց տարեկան հարյաքննութեանց եղանակին մէջն ենք, այդ պատճառաւ զանազան տեղերէ հրապարակ կեննեն աղբ. վարժարանաց մասին վիճակացոյց տեղեկութիւններ, միայն Բէօսթէնճէի Հայ վարժարանաց պատկերը չ'երեւցաւ հրապարակի վրայ. բայց ինչ երեւէր: Հայոց վարժարանը հազիւ իւր շինութիւնն աւարտած մի քանի ամսուան տ'ար քայլեր առած էր երբ արձակուրդի օրերն հասան ու չի թողուցին պատկերացումի ո՛չ մի գիծ. իսկ Գերմանա-Հայկական (բողոքական) վարժարանը բոլորեց իւր տարեկան ընթացքը, քննութիւն մ'ալ կատարեց որ աւելի հանդիսի կերպարանք ունէր, յորմէ մասնաւոր հետաքրքրութեամբ կրնանք սա տեղեկութիւնը տալ ընթերցողաց թէ այդ վարժարանն հաստատուած է բողոքական կրօնի ծաւալման համար, բայց այս տարի տեղւոյն լուսաւորչական ուսուցչին շնորհիւ երկսեռ ուսանողք զոհ չեղան իրենց տգէտ ծնողաց անհասկանալի լուստերական ձուլման, որով վրէժն վարժարանի վարիչն առաւ, զեղջիւղով անոր արձակուրդի ամիսներուն բացարձակ իրաւունքը, որոյ վրայ քաղաքիս մի քանի կարեւոր աղբայինք որոշեցին յառաջիկայ տարւոյն չի յանձնել զաւակնին օտար մարդորաններու, քանզի իրենց սիրած ու յարգած Հայ ուսուցիչը հրաժարած էր նոյն վարժարանէն, ու անոր շնորհիւ վարժարանիմէջ աւանդուած Հայ լեզուն, որոյ յաջողութիւնը կը վկայեն քննութեան բոլոր ունկնդիրք, չին յուսար թէ ապագային զալիք մի բողոքական վարժուհի կարենայ ուսուցանել. իսկ միւս կողմանէ Հայոց վարժարանն, որ նոր շինուեցաւ և ազգին պատիւն ի նկատի ունենալով կը մտածեն բոլոր ուժերին ամբողջութեամբ բարոյապէս և նորոգ կառուցանել վարժարանի ներքինն, մատակարարելով արժանաւոր ուսուցիչ և այլ հարկաւոր առարկայք վարժարանին, ու այս նպատակաւ կազմուեցաւ նոր մի հոգաբարձութիւն որուն գործերն, ինչպէս նաեւ այլ կրթական մանրամասնութիւն յիշեալ երկու վարժարանաց մասին հետզհետէ կը հաղորդեմ պատ. Միութիւնի յարգելի ընթերցողաց:

Բողոքականայ վարժարանի քննութեան մէջ տեսնուեցաւ օրինակիլի յառաջդիմութիւն մը հայ լեզուի մէջ, իսկ գերմ. և ռումաներէն լեզուաց ուսուցումն խիստ խղճալի կերպով մշակուած էր. գերմ. երգեր և աղօթքներ (քանզի հայերէն աղօթք չ'կայ այնտեղ) բաւական լաւ արտասան-

ուեցան կամ երգուեցան, նուագարան պակաս էր, թէեւ շաբաթ օրեր մանչ, աղջիկ միացնելով մէկ սրահի մէջ այդ ալ կը գործածուի եղեր ներքնապէս: Կրօնի դասեր գերմաներէն լեզուով կ'աւանդուին և քննուեցաւ, Մովսէսի ծննդոց գրքին անվերջ անուանները տղայք թուրքերէն համարեցին, աղբ. երգ կամ պատմ. իսպառ բացակայ, թուաբանութիւնը բոլորովին անկեալ վիճակ մ'ունէր: Չարժիք աւելի երկարել տղոց բարոյական անկումին մանրամասնութիւնը, որ գերմ. լեզուի փայլէն հրապուրուած ծնողք չարաչար կը տուժեն ոյժ տալով իրենց տոհմական կորուստին:

Յաջորդաբար ընդարձակ կերպով պիտի գրեմ բողոքականութեան վրայ ընդհանրապէս՝ և տեղւոյս վարժարանաց (բողոքականաց և հայոց) և անոնց պաշտօնէից վրայ մասնաւորապէս:

Մ.

Տ Օ Պ Ր Ի Չ

Գրեթէ ամիս մը առաջ Տօպրիչի աղբ. վարժարանի սանունը՝ իրենց մէջ 15 ֆր. հանգանակելով զրկեցին Շարժումի խմբագրութեան, ի նպաստ Հայաստանի սովետոյ: Այս փոքրիկներու աղբասիրական ձեռնարկը շատ սրտաշարժ և միանգամայն ազդու յանդիմանութիւն մ'էր մեր շահամու և կծծի հարուստներուն. սակայն ինչ օգուտ ունի անձրեւը ապառաժ քարին: Տարիէն աւելի է որ աղբային և օտար թերթերը միահամուռ ձայնով օգնութիւն կ'աղաղակեն մեր քարուքանդ հայրենիքի սովեալ զաւակներուն. մեր հաստափոր աղաները՝ որոնք մեծ թիւ մը կը կազմեն մեր մէջ, միայն խնջոյքներու և գինետուններու մէջ գիտեն յիշել Հայն ու Հայաստանը: Ասոնք անմահ Գամառ-Բաթրիպայի նկարգարած հայրենասէրներն են, որոնք միշտ կը փափաքին հայաստանը հրաշքով ազատուած տեսնել և իրենք ալ առանց փոքր զոհողութիւն մը ընելու իշխանապետութեան զլուխը կանգնելու Դուրք. ո՛վ սրբագործուած և պաշտելի հայրենիքի անարժան զաւակներ, արդեօք չէք մտաբերեր որ ապագայ պատմութիւնը սեւ էջեր վերապահած է ձեզ համար: Ձեր ազգակիցները հերոսաբար կը կռուին ազգին պատուոյն համար, այն ազգին, որուն զաւակներն էք դուք ալ: Վերջապէս սուրն ու գնդակը կ'աւանդան ու սովը, բանան ու աքսորը այնքան սոսկում ու զգուանք չեն ազդեր այն նահատակուող հերոսներուն, որչափ ձեր ցուրտ ու գծուած անտարբերութիւնը: Դարձեալ չի պիտի ծանրանայինք այսչափ, եթէ չ'տեսնէինք ձեր մէջ վատողի արարածներ, որոնք Յունոթթրական պատերազմի ատեն՝ Հայաստանի 300,000 զոհերուն հանդէպ, զահիճ սուլթանի ոճրագործ զօրքերուն նպաստներ տուին ու հիմա տլ ճնշուած հայրենիքի բողոքի ձայնը: Լա-Հէյի Դեսպանատնովի Առջեւ խեղդելու ձգտող աներես և եւհողի կղերի մը անունը՝ պատարագի ատեն հակառակ ժողովրդի պնդման յիշել տալ ջանացին:

Երկու խօսք ալ Օրման-Ձատէին. Էֆէնտի հաղթթլերի՝ ափսոս, հազար ափսոս, որ երջանկայիշատակ Նար-Պէյի հետ մէկ յարկի մէջ ուսած ես, բաղդատէ քու փառասիրութիւնդ՝ անոր հայրենասիրութեան հետ, և պիտի տեսնես թէ՛ ո՛րքան ինկած ես բարոյապէս որ ամբողջ հայրենիք մը և ազգութիւն մը ի՛նչ ծախես կարմիր Սուլթանին: Մի՛ մոռնար սակայն որ Ս. Դատի զինուորները ներքին թշնամիներու համար ալ ունին մասնաւոր դաշոյն մը, որով չեն ուշանար վարձատրել իր ճակատագրին հետ խաղացող վատերը:

Ձի մոռնանք յիշել թէ՛ Տօպրիչի տօնավաճառին առթիւ հանդեսուելով, գոհունակութեամբ տեսայ որ հոն ալ ազգադաւ պատրիարքի անունը վտարուած է եկեղեցիէն:

Ալիսի Որդեգիրը

Կ Ա Լ Կ Ա Թ Ա

Եթե ամիս կալկոթա մնալով՝ մօտէն ողորդեալքեցի տեղւոյն Ազգ. Ճեմարանի վիճակը, որ խիստ աննախանձելի դրութեան մէջ կը գտնուի: Ճեմարանի կառավարչական ղեկը յանձնուած է բարձր անձնաւորութեանց, որոնք բնաւ հայերէն չեն գիտեր և մեծաւ մասամբ փաստաբան ու կարեւոր պաշտօնեաներ ըլլալով, բազմադրադ աշխատութեամբ ծանրաբեռնուած՝ երբեք ուշադրութիւն չեն դարձուներ ուսանողներու և դասատուներու վրայ: Վերջիններն այս պարթէն օգուտ քաղելով կը թերանան իրենց պարտականութեան մէջ. ո՛չ կարգապահութիւն ունին և ո՛չ ալ փոյթ կը տանին խեղճ տղայոց մտաւորական և բարոյական զարգացումին վրայ, միայն խոշոր ամսաթօշակներն գրպանելով յաճախ սփռելին խանութը վազել ու մաղիւնին շիտկել տալը գիտեն:

Ճեմարանի եկամուտը կը կազմէ պատկառելի գումար մը, որով միայն երկու լեզուէ դասեր կաւանդուին հայերէն և անգլիերէն խիստ անկենդան և անկատար, մինչդեռ այդ գումարով դաղիներէն դասեր ալ կրնային աւանդուիլ, ուսուցիչներու համեստ թօշակ վճարելով: Մեր գրածներն ապացուցանելու համար բաւական է ակնարկ մը նետել չրջանաւարտ ուսանողներու վրայ, որոնք կէս ուսեալ դուրս կուգան ճեմարանէն և ամսական 25-30 ֆրանկով տուններու և գործատանց մէջ սպասաւորութեամբ կը զբաղին չարաչար աշխատութեան ենթարկուելով, ինչու որ ո՛չ շնորհքով տօմարակալութիւն սորված են և ո՛չ ալ կանոնաւորապէս կրնան խօսիլ անգլիերէն լեզուն:

Ափսո՛ս այնքան ծախքերուն որ ի գուր կը վատնուին, միայն դասատուները կը ստանան ամսական 800 Բ. որ չեն արժեր: Ճեմարանի հսկող մարմնոյ յարգելի անդամները եթէ օրական երկու ժամ զոհէին, անշուշտ այս անորոշ վիճակին չէր ենթարկուիր և թէ այդ գումարով երէք լեզուէ դասեր կաւանդուէին կանոնաւորապէս հետեւեալ պայմաններով. ամսական 300ը անդլ. դասատուին 150ը դաղի. ասիկա կրնայ ստանձնել աշխարհադրութեան դասախօսութիւնն ալ, 150 ալ հայկաբանութեան՝ թուաբանութեան ու տօմարակալութեան դասերն ալ միատեղ. իսկ մնացած 100ով ալ երկու օգնական դասատուներ ունենալ: Բացի այս կարգադրութենէն ամենակարեւոր կէտըն է, ճեմարանի կառավարչական ղեկը յանձնել այնպիսի անձնաւորութեանց, որոնք հայերէն գիտնան և ժամանակ ունենան մերթ ընդ մերթ այցելել ճեմարանն և քննել դասատուներու ընթացքը, դպրոցի կարգապահութիւնը և ուսանողաց յառաջդիմութիւնը: Ահա այս միջոցներով միայն կարելի է բարեփոխել արդի անորոշ վիճակը և արդիւնք սպասել կալկաթայի հայ ճեմարանին:

Մեծայայտ ենք թէ տեղւոյն հայրենասէր դասակարգէն ձեռնհաս անձինք հետաքրքրուելով մեր դիտողութեանէն, նկատի պիտի առնեն խեղճ որբերու մութ ապագան և ընդհուպ պիտի փութան դպրոցի ներքին վիճակը բնօրինութեան ենթարկել և հիմնական փոփոխութիւն մը մտնեն:

Սինկաբօր (Հնդկաստան)

ԿԱՐՕ

ԱՆԱՀԻՏ

Հանգէս Ամսեայ

աղգայեն, զրական և գեղարուեստական: Հասցէն՝
A. Tchobanian 6 place de l'Odéon. Paris

ՀԱՅԵԼԻ

Աղգային և Զաւեշտական Շաբաթահանգէս

Տարեկան բաժնեգիրն է 12 ֆր. վեցամսեայ 6 ֆր.
Կոնստի. Հասցէն՝ Diran Papazian Rue Dragoman,
K. Stepan Aarna (Bulgarie)

ԱՆՄԱՀ ԺԻՐԱՅՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա

1881 թուականի ամրան տօթակէզ օրերէն մէկը, Փոքր Հայքի գիւղերէն մին ճամբորդ մը կը հասնէր, միջահասակ, վայելուչ կազմով. ծնօտը կը ծածկէր խիտ մօրուս մը, որ հակառակ իր անպաճոյճ զգեստին, խնամով շիտկուած ու իր առնական դէմքին վեհութիւն մը կուտար: Ուշադիր դիտող մը անոր հետաքրքիր նայուածքէն անմիջապէս կրնար նշմարել թէ՛ նա օտարական մըն է: Ընկեր չունէր և ոչ ալ գրաւտ, իր ճամբորդութեան միակ բեռը կը կազմէին պղտիկ ծրար մը, որը մէջքին կապած էր և ձեռքի կաղնեայ ցուպը. տարիքը 30էն աւելի չ'ար: Ո՞վ էր այդ խորհրդաւոր ճամբորդը, ինչո՞ւ կը թափառէր այդ կողմերը. ինքն և Աստուած միայն գիտէին:

Վերջապէս հասաւ Զ... գիւղը, որուն մուտքին վրայ շինուած էր գիւղին աղբիւրը, ինչպէս նաեւ գիւղին անդաստանը ոռոգող ջրոյն քարաշէն աւազանը, յորմէ քիչ մը վար ցցուած էին տասնի չափ ուռենիներ, որոնց չորս կողմը քարորմով շրջապատուած, մէջտեղէն աւազանի ջրէն մաս մը խօխօջալով կը սահէր դէպի մեծ առուն և կը միանար անոր, շինականներու զբօսավայրն էր այդ: Ո՞րչափ քաղցր է ամրան հրատապ օրերու մէջ նստիլ այդ ուռենեաց զով հովանիին ներքեւ բուսած դալարներուն վրայ, ուր աչացդ առջեւ կը պարզուին գիւղի պարտիզաց կանաչախիտ և անթափանչ ծառաստանները, որոնց մէջ անհամար սոխակներու ներդաշնակ երգերը, թռչնոց ճռուղիներն և անուշաբոյր ծաղկանց խնկաւէտ բուրուճը՝ մարդս՝ պահ մը կը փոխադրեն ինքնամոռացութեան աշխարհը:

Ուռենիներու շուքին տակ նստած էին նոյն գիւղացի չորս երիտասարդներ, որոնք տեսնելով օտարականի մը դէպի իրենց մօտենալն, սկսեցին մէկ մէկու հետ փոխփոխով դիտել և ծաղրական ակնարկներ նետել անոր. բայց նա՝ առանց կարեւորութիւն ընծայելու անոնց ընթացքին, մօտեցաւ ու բարեւելով նստաւ, և ինչպէս կերևար իր խօսակցութենէն, հակառակ իւր ցնցոտիներուն շատ լաւ ուսեալ մէկն էր: Նախ հարցուց գիւղի անունը, բնակչութիւնը, դպրոցի վիճակը եւայլն. մեր երիտասարդները բաւական խօսակցելէ յետոյ սկսած էին տակաւ առ տակաւ համակրիլ նորեկին, այնպէս որ երբ կը պատրաստուէին մեկնելու, անոնցմէ մին առաջարկեց հիւրասիրել զայն, օտարականը սիրով ընդունեց այդ ազնիւ երիտասարդի առաջարկը և ընկերանալով անոր ուղղութեան դէպի տուն. ժամանակն անցած լինելով ճաշեցին և իւրաքանչիւրն իրենց սենեակները քաշուեցան հանգստանալու: Հիւրն ալ առաջնորդութեամբ առանձին սենեակ մը ուր առանց հանուելու անկողինն դէմ գտնուած սէտի իրին վրայ ընկողմանած երկար առնէ մնաց, կարծես քունը խոյս տուած էր իրմէ. մինչեւ կէս գիշեր խոր մտածմանց մէջ ընկղմած՝ վերջապէս կէս գիշերին արտուանուեց ծանրացան ու քնոյ մէջ թաղուեցաւ: Առտուն աղօթարանը հագիւ բացուած էր երբ հիւրը արթնցաւ, շատ չանցած հիւրընկալ երիտասարդը ղենջակ մը և քիչ մը ջուր բերաւ հիւրին լուացուելու համար, ապա տանտիրինը սուրճ մատոյց որուն յաջորդեց նախաճաշի սեղանը, երբ նախաճաշը վերջացաւ, օտարականը փափաք յայտնեց Եկեղեցի երթալ և խնդրեց երիտասարդէն որ իրեն ընկերանայ: Եկեղեցին շինուած էր գիւղի կեդրոնը, քարուկեր և բաւական կոկիկ. Եկեղեցւոյ չրջաբակին մէջ կար նաեւ փոքրիկ խուց մը որ այդ ժամանակ դպրոցի տեղ կը ծառայէր. Եկեղեցւոյ աւարտումէն վերջ մեր այցելուները մտան այդ խուցը, ուր գիւղի մանկաբոյժն անկողնի նստած էին կարգաւ գետնի վրայ: Օտարականը հետաքրքրութեամբ քննեց ուսանողները, սակայն իր դէմքի արտայայտութենէն կը

սանողները, սակայն իր դէմքի արտայայտութիւնէն կը հասկցուէր դժգոհ մնալուն նշանները, ինչու որ գիւղացիք հակառակ իրենց բարեկեցիկ վիճակին, դպրոցը շատ խեղճ ձգած էին, յանձնելով զայն անուս և տգէտ դասա-
ն ուի մը խնամքին:

Դպրոցէն մեկնեցան ուրիշ առթիւ այցելելու խոս-
տումով. երբ դասը ելան, օտարականը առաջարկեց մի քիչ
պտոյտի ելնել. մեր երկու երիտասարդները՝ լուրջ խօսակ-
ցութեան մը բռնուած գիւղէն բաւական հեռացած էին,
այն ասան գիւղացի երիտասարդը հարցուց թէ ո՞ր կուղէր
երթալ, այս անգամ ճամբորդը փափաք յայտնեց գիւղին
հանգէպ իբր 5 քիլոմէթր հեռու գտնուած լեռան դագա-
թը բարձրանալ. ընկերը սիրով ընդունեց և սկսան յա-
ռաջանալ դէպի այն կողմ. գիւղացի երիտասարդին հե-
տաքերը թիւնն ու զարմանքը զգալապէս կը շատնար ան-
ծանօթին վրայ, սրով հետեւ նա սկսած էր մանրակը-
կիտ քննութիւններ ընել իր շուրջը գտնուած ամէն տե-
ղերու և գիրքերու վրայ: Անոր խուզարկու աչքերէն
երբէք չէին վրէպիր ամենաաննշան անձաւ մը, ձոր մը,
աղբիւր մը և ապառաժներու ծակտիքներ. ամենուն ալ
քովն երթալով մօտէն կը զննէր, մազլցելով ապառաժ-
ներէն վեր կը սլանար և ուշի ուշով կ'իմաստասիրէր ամեն
ինչ. ուշադրութեանը առարկայ դարձած էին մանաւանդ
քիչ շատ ընդարձակ քարայրներ ու խիտ անտառներ:

(Շարունակելի)

Ա.Լ.Ս.Ս. ՈՐԴԵՎԻՐԸ

ԼՐՏԵՍ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԻՆԸ ՏԵՍՍՐԱՆՈՎ

Գիտեց և Գրեց

ՃԵՐԱՐՏԱՆՈՍՆԱՆ

Թ

Ճանկիւլեան — Մտադիր եմ:

Արփիար — 2,000 բուպի խնդիրը ձեզ ծանօթ է, շա-
տեր կը կարծեն թէ ես այդ դրամը կոկորդոս անցուցած եմ,
թէեւ իրաւունքս էր, քանի որ այդ գումարը Գր. Արծրու-
նին ինձ տուած էր անձնական գործածութեանս համար,
բայց ես վեհանաճար կուսակցութեան յանձնեցի:

Ճանկիւլեան — Բայց կարծեմ այդ գումարի համար
դուք Մուրատին գրած եիք, որ կուսակցութեան կը պատ-
կանի, թէեւ այդ նամակը Մամբրէի մատնութեամբ կա-
ռավարութեան ձեռքը հասաւ:

Արփիար — Ըլլայ իմ, ըլլայ կուսակցութեանը, վեր-
ջապէս կուսակցութեան համար ծախսուած է:

Ճանկիւլեան — Լա՛ւ, սակայն պէտք է գիտնալ որ
փոքր գումար մը չէ, պէտք է հաշիւ տաք թէ որո՞ւ գիտու-
թեամբ և ի՞նչ բաներու ծախսուած է:

Արփիար — Չեմ կարող յիշել թէ ի՞նչ բանի և որո՞նց
գիտութեամբ ծախսուեցաւ, եթէ տարի անցեր է, տօմար
չունիր:

Ճանկիւլեան — Անկարելի՛ է, քանի որ իմ հասցէին
բերած ես և գործի անունով, պէտք է կամ ցոյց տաս՝ թէ
որո՞ւ թոյլտուութեամբ և ի՞նչ բաներու համար ծախսած ես
և կամ պիտի վճարես:

Արփիար — (մեկուսի) Աս մարդն ալ յամառին մէկն է
եւեր է հին հաշիւներ կը պրպտէ... խնդիրը փակելու է,
որովհետեւ չը պիտի համոզուի: (Ճանկիւլեանի դառնալով)
Չեմ յիշիր կոր, չեմ գիտեր, անցած գայած բանի վրայ
խօսիլը աւելորդ է, աւելի կարեւոր գործեր կան այժմ:
Մեր Փարիզի ընկերները ի՞նչպէս գտաք:

Ճանկիւլեան — Շատ դժգոհ եմ, անոնք յեղափոխու-
թիւնը պղծող մարդիկ են, տեսայ ու լսեցի իրենց ազտոտ
ու լիտի ընթացքը ու գործերը, անոնք յեղափոխութեան
անունին արատ կը բերեն:

Արփիար — (դառնութեամբ ձեռքը գլխին զարնելով և
սենեակին մէջ վեր վար պտտելով, կատաղութեամբ) Ախ,
ի՛նչ յիմար տղաքներ են, որ ձեզի հետ այդպէս վարուեր են:

Ճանկիւլեան — (մեկուսի) Վշտացաւ մեր Պարոնը, ա-
յո՛ւ, որովհետեւ իր սիրելիները պէտք եղած ճարպիկութիւ-
նըն ու ճիւղութիւնները չեն ունեցած, ինձմէ ծածկելու
համար իրենց ազտոտ ու լիբր գործերը:

Արփիար — (նստելով) Բայց պէտք է գիտնաք որ Լեոն
Փաշալեան ու Արշակ Չօպանեան Հնչակեաններ չեն, Աղա-
սին ալ Փարիզի մէջ որ և է պաշտօն չունի:

Ճանկիւլեան — Եթէ Փաշալեան ու Չօպանեան Հըն-
չակեան չեն և Աղասի Փարիզի մէջ դեր մը չունի իբր Հըն-
չակեան, Մարտի մէջ պէտք է հրատարակէք այդ, որ-
պէսդի լսողներ ու տեսնողներ ամբողջ Հնչակեան կու-
սակցութիւնէն չի գայթակղին: (մեկուսի) Ի՞նչպէս հա-
ւատամ այս Պարոնին խօսքերուն, բանի որ աչքերովս
տեսած եմ, թէ այդ բաղդախնդիրները Փարիզի մէջ իբր
Հնչակեան յեղափոխականներ ի՞նչպիսի կարեւոր դերք ու-
նին, ի՞նչպէս տեղեակ են Հնչակեան կուսակցութեան բո-
ւոր գաղտնիքներուն, Հնչակեան մասնաճիւղերուն հասցե-
ները Լեոն Փաշալեանին քով կը գտնուի, իբր Հնչակեան
ի՞նչպէս լաւ կապին:

Արփիար — (քիչ մը մտածելէ յետոյ) Այդ բանը չեմ
կարող ընել:

Ճանկիւլեան — Ձե՞ք կարող հրատարակել:

Արփիար — Ձե՞նք կարող:

Ճանկիւլեան — Ո՛ւրեմն, խոստովանեցէք, որ անոնք
Հնչակեան գործիչներ են...:

Արփիար — (մեկուսի) Այս խըմբելին քիթէն բռնելու
է, իր համոզումը ի՞նչ որ կուգէ այն լի՛ի, մենք անոր ա-
նունը չահագործելու ենք: (Ճանկիւլեանի դառնալով) Դուք
լաւ կընէք, որ Ամերիկայ երթաք իբր մեր ներկայացուցիչը
և յանուն կուսակցութեանս դրամ հանգանակէք, ձեր ճա-
նապարհածախսը և ուրիշ բոլոր ծախսերը մենք կը հոգանք:

Ճանկիւլեան — Այդ բանը առայժմ յանձն չեմ առնեք,
նախապէս պէտք է ժընէվ երթամ և Մի ու թ ե ան մա-
սին կարգադրութիւն մը ընեմ, յետոյ Ամերիկայ կ'երթամ:
(մեկուսի) Բանի որ կարգ մը Հնչակեան գործիչներու բա-
րոյականին ու անկեղծութեանը վրայ վստահ չեմ, իրենց
ձեռքը խաղալիք չեմ ըլլար, այո՛ւ, գիտեմ ու կ'զգամ ա-
ստից խորհած սատանութիւնները, կուզին անունս չահա-
գործել... բայց ո՛չ թո՛ղ չի յուսան, այժմ աչքերս
բացուեցան: ա՛լ այնքան միամիտ չեմ...:

Արփիար — (մեկուսի) Որչափ դժուար է այս մարդը
ծուղակի մէջ ձգելը, մեր գիտցած պարզամիտ մարդը չէ,
փոխուեր է, բայց ուրիշ փորձ մըն ալ ընենք: (Ճանկիւլե-
անին դառնալով) Լա՛ւ, բայց հարկաւոր է, որ Մարտի
մէջ պաշտօնապէս ստորագրութեանդ տակ հրատարակեալ
թէ Նորակազմ Հնչակեան կուսակցութեան կը պատկանիս:

Ճանկիւլեան — Առայժմ թո՛ղ մնայ: (մեկուսի) Բայց
մի բան ընելու է, որ իմ վրայ վստահանան, կուզեմ դեռ
մի քանի գաղտնիքներ ալ իմանալ, այո՛ւ, պէտք է որ վըս-
տահութիւն ներշնչեմ, այսպէս ասոր բոլոր առաջարկները
մերժելովս նպատակիս չեմ հասնիր, ուրեմն քիչ մը զիջո-
ղութիւն հարկաւոր է: (Արփիարին ուղղելով) Միայն այժ-
մէն կարող եմ Մարտի մէջ հասցես յայտարարել, որ-
պէսդի նամակներս խմբագրութեան անունով գան:

Արփիար — (ուրախութեամբ) Շատ լաւ կընէք: (մեկու-
սի) Վերջապէս ծուղակս ինկաւ. յիմար ժողովուրդը պէտք
է գիտնայ, որ Պատրիարքարանի հերոս Ճանկիւլեանը մեր

կուսակցութեան կը պատկանի, այս բառակա՛ն է, անոր անունով մեր կուսակցութիւնը մեծ վստահութիւն պիտի վայելէ և զրամները առատօրէն մեր գանձարան, ի՛նչ կը սեմ. . . , իմ գրպանը պիտի մտնեն: Այս խրմալը խաբէլու համար խօսք մըն ալ ըւեմ, (ձանկիւլեանին դառնալով) Կը տեսնե՞ս, ես կ'ընթացայ հմ, բայց կ'ընթեր իմ քով չեմ պահեր, կ'ընթեր, հաշիւներն ու ամեն բան պ. Տամատեանի քովն է. ի՛նչ պիտի ընեմ, ես ատանկ բաներու խառնուել չեմ ուզեր:

(Տամատեան ներս կը մտնէ)

Ձանկիւլեան — (Տամատեանին) Միութեան խնդիրը լուծելու համար ժընէվ երթալս հարկաւոր է:

Տամատեան — Շատ լաւ կը լինի, Դաշնակցութիւնը ձեր վրայ վստահութիւն ունի, դուք ամենէն յարմար անձն էք բանակցութիւնները վարելու կուսակցութեանս կողմէ պաշտօնապէս:

Արփիար — Աւելորդ ծախքեր պիտի ընենք, Դաշնակցութիւնը փափաք չունի մէջ հետ միանալու կամ համերաշխ գործելու:

Տամատեան — Կը սխալիք, անոնք միշտ ընդունած են մեր հրաւերը, միայն պայմաններ կառձարկին, եթէ այդ պայմանները մեր կողմանէ յարգուելու լինին, միութեան խնդիրը շուտով կը լուծուի:

Արփիար — Սակայն վարչութիւնը պիտի ընդունի՞ բոլոր այդ պայմանները, ըստ իս ստորութիւն է:

Տամատեան — Ոյնքան ալ ծանր պայմաններ չեն, զըլխաւոր հարցը ձեր վրայ է, և ես հաւատացած եմ, որ եթէ ձեր կողմէ փոքր ղոհողութիւն մը լինի, ամեն արգելք կը վերնայ:

Արփիար — Շատ լաւ (Եսկսի նամակ գրել): Ահա պատրաստ է, բայց պէտք է գիտնաս, որ Կեդրոնը չէ կարող ճանապարհածախս հոգալ, զրոմ չկայ: (մեկուսի) Անկուտին ճանապարհածախս չի գտնելով ժընէվ չը կրնար երթալ, այս դրամի խնդիրը սատանան ինչպէս ալ միտքս ձգեյ, հա՛, հա՛, հա՛, (կը խնդայ):

Ձանկիւլեան — Ես անպատճառ պիտի երթամ, քանի որ ամբողջ հայ ժողովուրդը Միութիւն կը պօռայ, պէտք է այդ ցանկալի Միութեան արգելք եղող պատճառներն իմանամ ու ժողովուրդին պարզեմ: Ես ճանապարհածախս կը հաղամ այն դրամէն, որ պարտքերս վճարելու յատկացուցած եմ: Այսօր իսկ ճամբայ կ'ելեմ:

Արփիար — Լա՛ւ, շատ չնորակալ եմ: Գիտե՛մ. . . Միութեան համար Դաշնակցականները իմ անձն պիտի պատճառաբանեն և պիտի պահանջեն, որ ես վարչութեանէն հեռանամ, եթէ ե՛ս պիտի ըլլամ Միութեան արգելք, հոս վերադառնալէդ անմիջապէս ետքը կը հրաժարիմ (մեկուսի) վա՛յ հաւատացողին:

(Ձանկիւլեան կը մեկնի)

Տամատեան — Փարիզ երթալը ես այնքան անհրաժեշտ չեմ տեսներ:

Արփիար — Շատ հարկաւոր է, գործերը կարգի դնելու է, իմ երթալովս հարուստները գէպի մեր կուսակցութիւնը կը յարին. շուտով կը վերադառնամ:

(Երկուքը միասին դուրս կ'ելլեն: Մի քանի րոպէ յետոյ Տամատեան կը վերադառնայ մինակ, և սեղանին առջեւ նստելով մեկուսի կը խօսի):

Տամատեան — Արփիար հինգ օր է տակաւին Փարիզէն չի վերադարձաւ. . . , խեղճ Ձանկիւլեանին ճանապարհածախս չի տուաւ, առարկելով որ սնտուկը զրամ չկայ, բայց հիմայ ինքը հարկերներով պիտի ծախսէ. . . : Խեղճ ժողովուրդ. . . , տարիներով այս հացկատակներէն խարուեր ես և տակաւին ալ խաբուելու վրայ եմ. . . :

(Արփիար ճամբորդի զգեստով ներս կը մտնէ):

Արփիար — Տեսա՛ր, շուտ վերադարձայ: Ձանկիւլեանէն ի՛նչ լուր:

Տամատեան — Ոչի՛նչ, նամակ չստացայ:

(Տամատեան կը մեկնի):

Արփիար — (մեկուսի և առանձին) Անոնց ամենուն ալ խերը կանխածեմ, կուսակցութենէն դիւ գուրս ձգեն. . . անմիտներ, որո՞ւ հետ կը խաղան կոր. . . :

(Դրաշոր հրանտ ներս կը մտնէ):

Արփիար — Տեսնե՛նք, իմ երթալէս վերջը ի՛նչ պատահեցաւ:

Հրանտ — Ոչի՛նչ:

Արփիար — Ձանկիւլեանէն նամակ եկա՞ւ:

Հրանտ — Չեմ կարծեր, բան մը չի տեսայ և չի լսեցի. ան չէ ամա՛ւ, Միութեան գործին մէջ ձանկիւլեան պիտի յաջողի, ինծի այնպէս կերեւայ կոր, շատ անկեղծօրէն կը փափաքի կոր:

Արփիար — Այո՛, ձանկիւլեան թէեւ անկեղծօրէն Միութեան կը ձգտի, բայց չի պիտի յաջողի, որովհետեւ մենք Միութիւն չենք ուզեր, պէտք տլ չունինք:

Ձանկիւլեան Տամատեանի հետ ներս կը մտնէ: Հրանտ կը մեկնի):

Արփիար — (սրտադողով) Պ. Ձանկիւլեան ի՛նչ լուր:

Ձանկիւլեան — (մեկուսի) Գող, սիրտը դո՛ւ. . . : Բանակցութեանց արդիւնքն իմանալու անհամբեր է: (Արփիարին) Ձեր կասկածին պէս եղաւ, պատճառը ձեր անձը կը նկատեն. . . :

Արփիար — (յուզուելով) Ի՛նչ փաստ, ի՛նչ ապացոյց և ի՛նչ առարկութիւն մէջ բերին. . . :

Ձանկիւլեան — Սկիզբէն մինչեւ վերջը պնդեցին, որ «Հնչակեան նորակալ» վարչութեան և գործիչներու վրայ վստահութիւն չունին, որովհետեւ անկեղծ չեն վերաբերուիր դէպի դործը: Յետոյ ցոյց տուին ձեր հարցաքննութեանց հայերէն թարգմանութիւնները, որով մատնած էք դանձապետ Տ.Յ., Թ.Վ., Պ.Տ., Պեչիկթալցի Յ.Ս. և Խորէն-Նարպէյը: Նոյնպէս ցոյց տուին Սուրէնի, Աղասիի կեղտոտ նամակները և վերջապէս միաձայնութեամբ յարեցին, «Մենք բոլոր Դաշնակցականներս Արփիարն իբր դաւաճան կ'ընդունինք և ժամանակին մահուան դատապարտած ենք»:

Արփիար — Բնածնալով է՛հ, միեւնոյն լրկնութիւնները, պօչ խօսքեր, բայց հոգ չէ, ես գիտե՛ի և ձեզ եւս ըսի, որ նոյն բաները պիտի կրնան, այժմ նայինք ի՛նչ եզրակացութեան եկաք:

Ձանկիւլեան — Թուած պատճառներովս Դաշնակցականները մերժեցին նախնական որ եւ է բանակցութեան մտնել, պահանջեցին նախապէս այդ արգելքները բառնալ և յետոյ երկու կողմէ ալ լիազօր պատգամաւորներ ընտրելով բանակցութեան սկիւր: Դաշնակցականներու այս առաջարկը իրաւայի համարեցի, և որպէսզի մեր կատարած բանակցութիւններուն օրինաւոր ձեւ մը տրուի, արձանագրութիւն մը կազմեցինք և բոլոր ներկայք ստորագրեցին, երկու օրինակ զրուեցաւ, մին Դիօշակի խմբագրութեան մօտ մնաց և միւսը իմ մօտ, ահաւասիկ, (ծոցէն թուղթ մը հանելով արփիարին կը ներկայացնէ):

Արփիար — (Յուզեալ թուղթը կարդալով) Այո՛, նպատակներն զիս իսպառ գործէն հեռացնել է, նոյնպէս կասկած կը յայտնեն մեր կարգ մը ընկերներուն համար. . . : Ո՛չ, այնքան ալ չե՛մ կարող ստորնանալ, թո՛ղ ընկերական ատեան կազմեն, նախապէս հաստատեն իմ դաւաճան, մատնիչ և լրտես մը լինելս ու յետոյ կուսակցութենէն արտաքսուելս պահանջեն. . . :

Ձանկիւլեան — Ես ձեզմէ որոշ պատասխան մը կուգեմ. ձեր պահանջը իրաւացի ալ ըլլայ, Միութեան խընդրի հետ այժմ բնաւ կապ չունի, յետոյ կարող էք ընկերական դատ պահանջել, բայց այժմ Դիօշակի խմբագրութեան որոշ պատասխան մը տալ հարկաւոր է, ազգը միութիւն կ'ընդունի կոր, աւելորդ ժամաւաճառ չի լինիր,

միութիւնը մահու և կենաց խնդիր է ազգին համար:

Արփիար — (քիչ մը խորհելէ յետոյ) Լա՛ւ, գրէ խմբագրութեան, որ Միութիւնը չի խանգարելու համար ես կուսակցութենէն պիտի հրաժարիմ, թող ազգին առջեւ զիս պատճառ չի բռնեն:

Ճանկիւլեան — (Մեկուսի, ուրախ դուարթ) Աստուած ի՛մ... այս ի՛նչ բաղդաւորութիւն է, վերջապէս Միութեան ամենամեծ արգելքը մէջտեղէն վերցաւ, քիչ ատենէն ամենուս բաղձացեալ Միութիւնը պիտի իրականանայ, և յեղափոխական դործը նոր ու լայն ծաւալ մը պիտի ստանայ, որով մեր բաղձատանջ Հայրենիքի վրէժը լուծելու և անոր վերջերուն սպեղանի դնելու կարող պիտի ըլլանք... (Արփիարին) Շատ շնորհակալ եմ, ձեր անձնազոհութիւնը մեծ արժէք ունի, նոյն իսկ ձեր այդ անձնազոհութիւնը Միութեան սկզբնապատճառ պիտի դառնայ, ես վաղը կը գրեմ Դրօշակի խմբագրութեան, մնաք բարով... (ձեռքերը սեղմելով կը հեռանայ):

Արփիար — Լա՛ւ, եթէ խնդիրն իմ անձով պիտի վերջանայ, ես պատրաստ եմ, յանուն ժողովրդի գերագոյն շահին, կուսակցութենէն հրաժարիլ (մեկուսի) Խըմպըլ-նէր, զիս երախայի տեղ են գրել, ես ասոնց զլխուն ի՛նչ օյիւններ կը խաղամ, միութիւն... բնա՛ւ երեսը տեսնելու չեն, բանի որ ես կապրիմ...:

Ճանկիւլեան — Ո՛ւրիմն վարչութեան կողմէ պաշտօնապէս գրեցէ՛ք, որ ես լիազօրութիւն ունիմ յանուն Նորակազմ վարչութեան բանակցելու Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն խընդրի մասին Դաշնակցութեան հետ:

(Շարունակելի)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահիրէ Պ. Ո. Ն. — Ձեր յօդուածը ուրիշ թերթի մը մէջ արդէն հրատարակուած ըլլալով, կրկնութիւնը աւելորդ համարեցինք:

Մարսէյլ Արմէնիա — Շնորհակալութեամբ ստացած ենք:

Սինկարօր պ. Կարօ — Չինանշանները և թերթերը զրկուած են Սինկարօր, իսկ նամակդ Հօնկ-Գօնկ:

Անապատ պ. Ա. — Շնորհակալութեամբ ստացած ենք:

Սև Ծով — Յետ այսու շարունակաբար կը ստանաք:

Մեծ Քաղաք — Մեր խոր լուսթիւնը՝ իր պատճառները ունէր. յետ այսու կը տեսնուինք նամակաւ:

Պրիտ-Փօրթ պ. Կ. Ինկիլիզեան և Լօվրէնս պ. Պետիկեան — Պատասխան չստացանք, արդե՞օք մեր զրկածները ընդունած էք:

Սօհակ (Եգիպտոս) պ. Տ. Մ. — Փոխարժէքը ստանալով զրկեցինք:

Լօնտոն պ. Արծրունի — Դրութիւնդ իր ժամանակին ստացուած է:

Յլօրէնս (Իտալ.) պ. Մասիկեան — Ձեր զրկածը նոյն տեղէն ստացուած է անմիջապէս:

Վիտին պ. Մ. Յ. — Պարտք չունիք:

Վիլհէլմստօֆ պ. Ղ. Մ. — Ճամբորդութեանդ պատճառաւ թերթդ դադարեցուցինք, նոր հասցէիդ կը սպասենք:

Լօվէլ պ. Յ. Բ. — Նոր հասցէիդ կը սպասենք:

*** «Մահ Դաւաճանաց» կազմակերպութիւն — Մենք այնքան համարձակ գործելու անկարող ենք, մանրամասնութիւնը նամակով:

Ճիպուիթի պ. Հ. Մ. — Այսուհետեւ շարունակաբար պիտի ստանաք. նամակագրօ՞ւմ զրկել կարելի է 00/20 պակաս հաշուելով:

Պրիւքսէլ պ. Խ. Պ. — Պահանջածնիդ կը զրկուին այսօր: Նամակիդ կը սպասենք:

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք Տիար Մինաս Չերազի հրապարակախօսութիւնները բովանդակող հետեւեալ հրատարակութիւնը՝

CONFERENCE ARMENIENNE à Amsterdam par M. MINAS TCHERAZ, sous la présidence de M. le Dr. A. Kuyper, membre des Etats-généreaux des Pays-Bas. Su'et. La Conférence de la Paix et les Massacres Arméniens. Prix un franc.

S'adresser à la librairie Hoveker et Wormser, Amsterdam (Hollande)

ՀԱՅՆ ՈՒ ԹՈՒՐԿԸ և ԱՐԵՎԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Գահիրէէն ստացած ենք՝ այս տիտղոսով՝ 38 էջերէ բաղկացեալ տետրակ մը, որ լուրջ տեսութիւն մը կընէ Արեւելեան խնդրոյ վրայ: Գին 25 սանթիմ. գիմիլ՝

Bazar Mourour No. 32

CAIRE (Egypte)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

Գահիրէի մեր գործակատարը՝ ի վաղուց մեկնած ըլլալով, կը խնդրենք մեր յարգելի բաժանորդներէն որ փութան իրենց որոշ հասցէն իմացնել խմբագրութեանս, որպէս զի իրենց մասնաւոր հասցէին զրկենք թերթերը:

ԲԱՆԱՍԻՐ

Հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական և բնական

Լոյս տեսաւ երկրորդ թիւը ճոխ պարունակութեամբ: Հասցէն՝ Basmadjian, 112 Bd. Rochechoart PARIS

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Ուսումնաթերթ

Հասցէն՝ A la Rédaction de la Revue „Hantesse“ VII/3 Mechitharistengasse 4. Vienne (Autriche)

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Շնորհակալութեամբ ստացած ենք, Սանթիակոյէն (Հարաւ. Ամերիկ.) Տիար Պինանանէ 25 ֆր.: Լօվրէնս պ. Մատթէոս Կարապետեանէ 5 ֆր.: Մատիսօն պ. Ա. Ս. Լն 1 Տօլար: Աթէնքէն պ. Տիգրան Եայողճեանէ 1 Տրախմի:

ՄԱՀԱԳՈՅԺ

Լրագրոյ մամուլը զրուած պահուն վերջին թղթաբերը գուժեց մեզ Տիար ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՐԵՍԼԻ մահը:

Ձէյթունցի հին գործիչը պատմական անցեալ մը ունեցած է. — Հայրենիքի ազատութեան Սը. Գործին համար՝ ժամանակին թուրք կառավարութեան կողմէ հալածուած չղթապակապ բանաւորութիւնը խորբըր նետուած և բաղձադիմի տանջանայ ենթարկուած ըլլալով, իբր անկեղծ հայրենասէր մը պաշտելի դարձած էր Հայ հասարակութեան, բայց 1890էն առդին չենք գիտեր ի՛նչ հիմերու վրայ յենլով՝ չատեր ամբաստանեցին զինքը, իբր թէ յանուն յեղափոխութեան Տիգրիսի ազգայիններէն մեծաքանակ գումարներ կորզելով կոկորդը անուցած է:

Մենք որքան զինքը անձամբ ճանչցած ենք, յանուն ճշմարտութեան կը խոստովանինք սա իրողութիւնը, որ՝ իր միակ թերութիւնն եղած է: Նա՛ իր անհատական և ազգային կեանքին մէջ չափազանց չռալլօրէն վարուած և պատկառելի գումարներ փճացուցած է և Ձէյթունի իշխան հաշակելով իր անձը, բայց միեւնոյն ժամանակ երբեք մտաբերած չէ կարգ մը բախտախնդիր յեղափոխականներու պէս ազգին դրամովը իր ապագան ապահովել: Այս իրողութեան զօրաւոր ապացոյց մը կընայ համարուիլ իր վերջին օրերու նիւթական անկեղծ վիճակն: Ողբացեալ Չաբեան՝ 54 տարեկան կնքած է իր մահկանացուն Յուլիս 26 երկուշաբթի օրը Ռուսմանիոյ մայրաքաղաքին մէջ, ուր դացած էր դարմանուելու:

Հանդիստ իր ոսկերաց:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի